Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2021 «Վայոց ձորում երեք մանկական զարգացման կենտրոնների վերանորոգման և բարելավման» ծրագրի ստորագրման արարողություն

2022 թ. փետրվարի 28-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում տեղի ունեցավ 83,597 ԱՄՆ դոլար արժողությամբ «Վայոց ձորում երեք մանկական զարգացման կենտրոնների վերանորոգման և բարելավման» ծրագրի դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը՝ Ճապոնիայի կառավարության Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիմայի և «Մանկական զարգացման հիմնադրամի» տնօրեն տիկին Լուսինե Սիմոնյանի միջև: Արարողությանը ներկա էին նաև նախարարի տեղակալ տիկին Տաթևիկ Ստեփանյանը և նախարարության արտաքին կապերի վարչության պետի պաշտոնակատար պարոն Համբարձում Մինասյանը:

Ծրագրի նպատակն է ապահովել կյանքի դժվարին հանգամանքներում (հաշմանդամություն, աղքատություն, ընտանեկան բռնություն, չարաշահումներ) հայտնված երեխաների առողջ զարգացումը և սոցիալական հարմարվողականությունը՝ վերանորոգելով և բարելավելով խաղահրապարակներն ու խաղասենյակները Վայոց ձորում Մանկական զարգացման հիմնադրամի կողմից ղեկավարվող երեք մանկական զարգացման կենտրոններում: Սա կնպաստի տարածաշրջանում կրթության որակի և բարեկեցության բարձրացմանը: Արդյունքում ծրագրից կօգտվի մոտ 300 երեխա:

Նախարարի տեղակալ տիկին Ստեփանյանի ելույթը



Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Դրամաշնորհային պայմանագրի ստորագրումը

Դեսպան Ֆուկուշիման, տիկին Ստեփանյանը և տիկին Սիմոնյանը